

**XIX դարի երկրորդ կեսի եւ XX դարասկզբի Արցախի  
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հազարամյակների պատմությունն ունեցող Արցախի ինքնատիպ մշակույթը՝ տեղական երանգավորմամբ, ազգային նույն օրինաչափություններով ու առանձնահատկություններով անցել է երկար ու բեղուն ճանապարհ՝ հարուստ մարդկային մտքի ու ձեռքի ստեղծագործ աշխատանքի, ազատատենչ ոգու փայլատակումներով: Պատմական տարբեր ժամանակներում Արցախի մշակույթը ծառայել է հայ էթնոսի պահպանման և շրջակա, հաճախ ավելի հզոր, էթնիկական հանրություններից նրա պաշտպանության գերխնդրին: Աստիճանաբար ձևավորվել է հայության այդ հատվածի մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել այդ մշակույթի ավելի բնորոշ գծեր և դրանք հաղորդել հաջորդ սերունդներին: Լինելով հանուր հայության մշակույթի մի օղակ, Արցախի մշակույթը սնունդ է առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստն էր բերում համազգային մշակույթի գանձարանին: Հետաքրքիր է, որ Մեծ Հայքի այս նահանգի բնակչությունը, իր քաղաքական ու մշակութային շրջահայաց գործիչների ջանքերի շնորհիվ, պատմական ամենաժամր պայմաններում իսկ կարողանում էր ետ չմնալ համազգային հոգևոր կյանքի ընթացքից: Դա նկատելի է, հատկապես քննության ենթակա ժամանակաշրջանում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատմաքաղաքական խառնակ ու ծանր պայմաններում Արցախի մշակութային կյանքը շարունակեց հարատևել անհամաչափ առաջընթացով՝ իհարկե մինչև 19-րդ դարի սկիզբը:

Դարասկզբին տեղի ունեցող բախտորոշ իրադարձությունները Արցախի ժողովրդի պատմության մեջ նշանավորեցին մշակութային կյանքի էական փոփոխություններով և շրջադարձերով, որոնք որակապես փոխեցին երկրամասի հոգևոր ու նյութական մշակույթի բնույթն ու

կերպարը: Այդ շրջադարձները վճռական դեր խաղացին Արցախի ժողովրդի կյանքում, հիմք դնելով նոր ժամանակի պահանջների համահնչուն աշխարհայեցողությանը և մշակույթին՝ իր բոլոր դրսևորումներով:

Պատմական զարգացման նոր ժամանակներում Արցախի մշակույթը հանդես է եկել ոչ թե որպես իր մեջ ներառված բաղադրիչների պարզ հանրագումար, այլ բարդ ու ճկուն մի համակարգ, որում ճշգրտորեն ըմբռնվել են դարաշրջանի խնդիրները և բավարարվել ժամանակի և միջավայրի պահանջումները: Արցախի ժողովուրդը կարողացավ կարճ ժամանակում յուրացնել դարի շունչը, քայլ առ քայլ վերգտավ ու գիտակցեց իր նախնիների ստեղծած մշակութային արժեքների ոգին և, հենվելով դրա վրա, կերտեց նոր ժամանակի պահանջներին համահնչուն իր մշակույթը:

Նոր դարի առաջին կեսին ստեղծված Արցախի մշակույթը կարևոր օղակ եղավ իր դարավոր մշակույթի պատմության շղթայում և նոր որակ ու նոր իմաստ հաղորդեց նրան, միաժամանակ հիմք դառնալով դարի երկրորդ կեսին նրա փայլուն առաջընթացի համար:

Այսպես, 19-րդ դարի երկրորդ կեսը և 20-րդ դարի սկիզբը, կարևոր շրջան են Արցախի մշակույթի բազմադարյան պատմության ընթացքում: Այդ շրջանի մշակույթի զարգացումն ուներ մի շարք առանձնահատկություններ, որոնք թելադրված էին Արցախի ժողովրդի կյանքի յուրահատուկ պայմաններով:

19-րդ դարի 50-60-ական թվականներին Հայաստանում, ինչպես նաև նրա անբաժան հատվածում՝ Արցախում սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտում կատարվող տեղաշարժերը լուրջ փոփոխություններ առաջացրին երկրամասի հասարակական-քաղաքական և հոգևոր մշակութային կյանքում: Դա սերտորեն կապված էր Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման հետ, արդեն ֆեոդալական հասարակարգի ընդերքում վաղուց ձևավորված կապիտալիզմի պայմաններում միայն Անդրկովկասը կարողացավ ֆեոդալիզմից անցնել կապիտալիզմին<sup>1</sup>:

Կապիտալիստական հարաբերությունները հայ իրականության մեջ առավել նկատելի դրսևորումներ ունեին նաև հայկական աշխարհա-

<sup>1</sup> Տե՛ս, Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հր., հ. 6, Երևան, 1981, էջ 750:

սփյուռ գաղթօջախներում, ապա 19-րդ դարի կեսերից այդ հարաբերություններն սկսում են թափանցել Հայաստան և նրա մասը կազմող Արցախ, և էական փոփոխություններ կատարում երկրի սոցիալ-տնտեսական կյանքի, ազատագրական պայքարի, հասարակական մտքի ու մշակույթի զարգացման բնագավառում:

Այդ տասնամյակում Արցախի մշակույթի առաջընթացին նպաստեց արևմտահայ, ինչպես նաև արևելահայ իրականությունում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքների պայքարը, որոնցից յուրաքանչյուրը (կղերահետադիմական, լիբերալ-բուրժուական հոսանք)<sup>1</sup> մշակույթի զարգացումը ձգտում էր դնել իր համար ցանկալի հունի մեջ:

Արցախահայությունը սերտորեն կապված էր ինչպես հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ծավալված առաջադեմ լուսավորական գաղափարների, այնպես էլ Ռուսաստանի և այլ երկրների հասարակական-քաղաքական անցուդարձերի հետ, որը բարերար ազդեցություն ունեցավ ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև մշակութային կյանքի զարգացման վրա:

Պատմական հանգամանքների բերումով և իր աշխարհագրական դիրքի թելադրանքով Արցախը միշտ էլ կապող օղակ է եղել Ռուսաստանի և Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև:

Այդ պատճառով Արցախի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտը և մշակույթը մշտապես գտնվել է ոչ միայն մայր Հայաստանի, այլև այդ երկրների տնտեսական կյանքի և մշակութային ակտիվ փոխազդեցությունների ոլորտում՝ միաժամանակ պահպանելով իր հոգևոր ինքնատիպությունը և եզակիությունը: Մշակութային նորամուծությունները, Արցախի բնակչիմայական պայմաններին հարմարացվելուց և խորապես յուրացվելուց հետո, իրենց արժանի տեղն են գրավել երկրամասի ավանդական մշակութային արժեքների գանձարանում:

Արցախի մշակույթը ուշագրավ երևույթ է նաև հանուր հայության մշակույթի հայեցակետից, քանի որ խնամքով պահպանելով ու հարստացնելով ինքնատիպ մշակույթը, Արցախի ժողովուրդը դրանով իսկ արժանի ավանդ է ներդրել ազգային ընդհանուր մշակույթի գանձարանում: Հազարամյակների պատմությունը ակնհայտորեն հաստատում

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս, Վ. ՌՆՆՈՒՆԻ, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, ՀՀ ԳԱԱ հր., Երևան, 1956, էջ 6:

է այն ճշմարտությունը, որ մեր ազգային նկարագրին, որպես կանոն, խորթ է թեկուզ և ճոխ ու բազմակողմանիորեն զարգացած, մշակույթների նմանակող լինելը, համեմայն դեպս, միշտ էլ տիրապետող է եղել բուն ազգայինը՝ սերունդներին ժառանգություն թողնելու միտումը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Արցախի մշակույթի զարգացման վրա իր ազդեցությունն է ունեցել հայ ժողովրդի ազգային համախմբման գործընթացի ուժեղացումը, ազգային-ազատագրական շարժումների ծավալումը, գաղափարապես մշակված ու ընդհանուրի հավանության արժանացած ծրագրերի իրականացումը, որոնք նոր խնդիրներ են առաջադրել հայ առաջադեմ մտավորականներին: Նրանք առաջնորդվել են այն գաղափարով, որ ժողովրդին հարկավոր է լուսավորել<sup>1</sup>, հաղորդակից դարձնել դարաշրջանի սոցիալական ու քաղաքական տեղաշարժերին, մշակութային արժեքներին և նպաստել նրա ազգային ինքնագիտակցությանը, կյանքի կոչել իր խորքերում ծվարած կենսունակ ուժերին՝ մասնակից դարձնելով նրան ժողովրդի հոգևոր վերակենդանացմանը և վերափոխմանը:

Ժամանակի հրամայական պահանջներին համապատասխան, Արցախի մշակույթը զարգանում էր առավելապես մայր Հայաստանի մշակույթի հետ սերտ կապերի մեջ, կրում նրա խոր ազդեցությունը, մյուս կողմից, հայ-ռուսական կապերի ուժեղացումը հնարավորություններ էին ընձեռում, որպեսզի Արցախի մշակույթը ավելի սերտորեն առնչվի ռուսական առաջավոր մշակույթի հետ և նրա բարերար ազդեցությամբ զարգացման նոր հեռանկարներ ձեռք բերի, միաժամանակ օտար չմնալով համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին:

Քննարկվող ժամանակաշրջանի Արցախի մշակույթն իր ուղղություններով հանդերձ ուներ հայ մշակույթի երեք ճյուղավորումների (արևմտահայ, արևելահայ և գաղութահայ) արտահայտման ամենաբազմազան դրսևորումներ ու յուրահատկություններ: Սակայն նրա համար առավել բնորոշ ընդգծված ընդհանրությունները մեկ միասնական, համահայկական մշակույթն է: Այդ միասնականության, համընդհանրության ամենաեական հիմքերն էին ողջ հայ ժողովրդի դարերով պահպանված հոգևոր ընդհանրությունը, բազմադարյան մշակույթի հարազատ ավանդույթներին, միասնական հայրենիքից զրկված ժողովրդի

<sup>1</sup> Տե՛ս, Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 292:

սոցիալական ու ազգային ազատագրական գոյատևման ու միավորման անմար ձգտումը:

4. Երկանյանը իրավացիորեն մատնանշում է. «Եվ որքան էլ ուժեղ ու խորն էին օտար ազդեցությունները, հայ մշակույթը նոր ժամանակներում պահպանեց իր ուրույն դեմքը, կարողացավ նոր պայմաններին, կյանքի նոր պահանջներին համապատասխան յուրօրինակ ազգային արտահայտություններ ստանալ: Մշակույթի ամենատարբեր ճյուղերում եղել է մի ընդհանուր գիծ, մի միասնական ընդհանրություն, դա հայ ժողովրդի պատմական դառը ճակատագրից թելադրված ազատագրվելու հարատև ուղին էր, որ ստեղծագործելու և խիզախելու մշտական լիցքեր տալիս նրա մշակույթի գործիչներին»<sup>1</sup>:

Արցախի մշակույթի զարգացման գործում 19-րդ դարի կեսերից վճռորոշ դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ Արցախի երիտասարդությունը Ռուսաստանում, Եվրոպայում իր ուսումնառության ընթացքում հաղորդակից է լինում հասարակական-քաղաքական շարժումներին, կյանքի ընդհանուր առաջընթացին. նա ոչ միայն յուրացնում էր այդ երկրների մշակույթը, այլև նրանից առանձնացնում էր այն արժեքավորը, որը կարող էր առաջ մղել երկրամասի բազմադարյան մշակույթը:

Արցախի, ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային կյանքի աշխուժացմանը նպաստել են նաև երկրամասի մշակութային կենտրոնների սերտ կապերը հայկական խոշոր մշակութային կենտրոնների (Կալկաթա, Մադրաս, Նոր Ջուղա, Վենետիկ, Մոսկվա, Նոր Նախիջևան, Պետերբուրգ, Թիֆլիս, Բաքու և այլն) հետ իր բոլոր դրսևորումներով՝ գրատպության, պարբերական մամուլի, լուսավորության, դպրոցաշինության արվեստի և այլ ուղղություններում: Անժխտելի փաստ է, որ դարեր շարունակ, վայրագ նվաճողների ասպատակությունների հետևանքով պատմականորեն ստեղծվել է այնպիսի աշխարհաքաղաքական և ժողովրդագրական իրադրություն, որ հայ մշակույթի կենտրոնները տարանջատված են եղել վիթխարի տարածքում, գործունեություն են ծավալել բազմաբնույթ և նույնիսկ խայտաբղետ աշխարհագրական, էթնիկական և մշակութային բնակլիմայական պայմաններում: Նույնիսկ

---

<sup>1</sup> Տե՛ս, 4. Երկանյան, Հայկական մշակույթը 1800-1917թթ., ՀՀ ԳԱԱ հր., Երևան, 1982, էջ 12:

այդ պայմաններում օտարածին ազդեցություններից խուսափելով, անվերապահորեն մշակութային ավանդույթի կարգավորիչ գործառույթը ի վիճակի է եղել ապահովել ազգային մշակույթի համակարգի ամբողջությունը:

Պատմաշրջանի Արցախի մշակութային կյանքի զարթոնքի վրա շարունակում էր իր որոշակի ազդեցությունն ունենալ 19-րդ դարի 60-ական թվականներին արևելահայ իրականությունում ծավալվող հասարակական-քաղաքական-մանկավարժական հզոր շարժումը<sup>1</sup>, որի գործիչներն էին հյուսիսափայլականները՝ Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Ռ. Պատկանյանը և ուրիշներ: Լուսավորական շարժումը Արցախում ծավալվում է պարբերական մամուլի («Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես»<sup>2</sup> և այլն), հասարակական կազմակերպությունների, գրադարանային ընկերությունների և առաջադեմ ուսուցիչների ու աշակերտների միջոցով: Լուսավորական շարժման գործիչների մշակած ծրագրերում բովանդակում էին լուսավորության տարածման, դպրոցական ցանցի ընդլայնման, կանոնադրությունների ընդունման, մշակութային բազմապիսի ճյուղերի զարգացման հիմնական ուղիները<sup>3</sup>: Արցախահայությունը սոցիալ-տնտեսական ու քաղաքական հանգամանքների բերումով սկսել էր հաղորդակից դառնալ ժամանակի ազդեցություններին, պատկառելի լուսավորական շարժմանը: Ժողովրդին լուսավորելու քարոզն ու կոնկրետ գործը ամուր շաղկապվեցին իրար և տվեցին պայմաններին համապատասխանող ցանկալի արդյունքներ: Սկսվել ու դարակեսին լայն ծավալ էր ստացել ազգի համախմբման գործընթացը, որը շարժման մեջ էր դրել հասարակության մտավորականությանը՝ խթանելով մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացմանը:

---

<sup>1</sup> Տե՛ս, **Ն. Գ. Սարգսյան**, 19-րդ դարի 60-ական թվականների արևելահայ հասարակական, մանկավարժական շարժումը և «Հայկական աշխարհը» ԴՊՄԴ, գիտական աշխատություններ, Երևան, 1969, ք.1, էջ 43:

<sup>2</sup> Տե՛ս, **Ս. Ավագյան**, Ղարաբաղի մամուլի պատմություն, (1828-1920), Երևան, 1980:

<sup>3</sup> Այդ մասին տե՛ս, **Լեո**, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, **Գ. Գ. Դարությունյան**, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարում, 2001, Կանոնադրություն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Շուշի, 1894, «Կանոնք եկեղեցական ծխական ուսումնարանների հայոց», Վաղարշապատ, 1899:

Բնութագրող ժամանակաշրջանի Արցախի մշակութային զարգացման միտումն էր նաև համազգային գաղափարների մշակումը և դրանց շուրջ ազգային կենսունակ ուժերի համախմբումը, մերժեցումը ու համագործակցության հաստատումը միմյանցից անջատված հայության զանազան հատվածների միջև:

Պատմաշրջանում Արցախի և մշակույթի զարգացման բարդ գործընթացը չի ընթացել հարթ ու խաղաղ ճանապարհով: Մշակույթի բնութագրական հատկանիշները՝ դպրոցը, պարբերական մամուլը, գրատպությունը, արվեստի ճյուղերը և այլ ուղղություններ ունեցան ինչպես անախընթաց նվաճումների փայլտակումներ, այնպես էլ խոչընդոտող հանգամանքներ: Իշխող վերնաշենքում ուղղված աննպաստ ուղղությունները, քաղաքական բուռն իրադարձությունները, հարափոփոխ և դժնդակ պայմանները, ցարիզմի գաղութային քաղաքականությունը, տասնամյակներ շարունակ հայ-թուրքական ընդհարումներն իրենց բացասական ազդեցությունն են ունեցել Արցախի մշակույթի զարգացման վրա: Չնայած ստեղծված անբարենպաստ պայմաններին, այնուհանդերձ հայ եկեղեցին քաղաքական հեղաբեկումների օրերին որոշ դեպքերում պահպանեց իր դերը ժողովրդի հոգևոր մշակույթի ղեկավարման գործում և անգնահատելի ծառայություններ մատուցեց այդ ասպարեզում: Միշտ էլ հայ եկեղեցին ստանձնել է երկրի հոգևոր գաղափարական, մշակութային կյանքի ղեկավարի մենաշնորհը, լծվել երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական շահերի պաշտպանության գործին, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում: Իսկ մշակութային զարթոնքի նախանձախնդիր հայ մտավորականության կարող ուժերը համառ ջանքերով ի վիճակի եղան հաղթահարել մշակույթի զարգացումը կասեցնող բազում դժվարությունները և պահպանել Արցախի մշակույթի ինքնատիպությունն ու միասնությունը, որը կարևոր դեր խաղաց ազգային համախմբման, առաջադիմական գաղափարների մշակման գործում: Դեռևս դա էլ կանխորոշեց մշակույթի բնութագրական հատկանիշների վերելքը, նրա ընթացքի հիմնական ուղիները, դրսևորման ձևերն ու բովանդակությունը:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է եզրակացնել, որ XIX դարի երկրորդ կեսը և XX դարի երկու տասնամյակները (1850-1920 թթ.) կարևոր շրջան են Արցախի մշակույթի բազմադարյան պատմության

ընթացքում: Մշակութային զարթոնքի (դպրոցական ցանցի ընդլայնում, լուսավորության, գրատպության, պարբերական մամուլի, արվեստի զարգացումը, մշակույթի ականավոր գործիչների մատուցած ծառայությունները և այլն) առանձնահատկությունները թելադրված էին երկրամասի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու բազմազան ազդեցությունների և ժողովրդի կյանքին բնորոշ առանձնահատկություններով:

Աներկբա, Արցախի ինքնատիպ մշակույթը տեղական երանգավորմամբ զարգանում է առավելապես համահայկական մշակույթի բարերար ազդեցությամբ, ազգային նույն օրինաչափություններով ու առանձնահատկություններով: